որով եւ ընդունել էին:

Դուրսը խոր գիշեր էր արդէն:

Ես նայեցի շուրջս. ամէն բան նոր էր թւում ինձ ու անծանօթ, կարծես բոլորովին մի նոր քաղաք էի ընկել:

Փողոցները դատարկ էին բոլորովին. ճամփան լուսաւորում էր իր դողդոջուն, աղօտ լոյսով մեր թղթէ մեծ լապտերը, որ կախուած էր կառքի առջեւից: Ամենից շատ ինձ զարմանք էր պատճառում տների մելամաղձոտ ու սառն տեսքը:

Ցերեկը նրանք բոլորը բաց էին ու կենսալից. իսկ այժմ պատերը պինդ քաշած ու փակած, լուռ ու հանդարտ, առանց կեանքի մի նշոյլի. ո՛չ դուռ, ո՛չ պատուհան, նաւահանգստում իրար կողքին ու իրար վրա շարուած ապրանքների արկղների պէս:

–Խխունջը մտել է իր պատեանը.– լսեց իմ ետեւի կառքից ընկերներիս մէկի մեղմ ձայնը, կարծես նա վախենում էր խանգարել շրջապատող լռութիւնը:

Ջինը վազում էր անընդհատ, լապտերը ճօճ էր գալիս իր միակերպ, տխուր լոյսովը:

Աչքերս յառել էի այդ լոյսին, որի մէջ հոլի պէս պտոյտ էր գալիս Դեկուսկէ-սանի կայտառ կերպարանքը, ծիծաղում էր, ծռմռւում, ժպտում ու փոփոխւում, այնպէս կենսուրախ, այնպէս անփոյթ ու մանկական անհոգութեամբ:

Ու չը գիտեմ՝ ինչո՞ւ, մի խոր տխրութիւն իջաւ վրաս:

Ի՞նչ է դառնալու բնութեան զւարթ աղջիկը մի քանի տարի յետոյ: Գուցէ մի փայլուն գէյշա՝ հռչակաւի, ամբողջ Ճապոնում տարածւած: Գուցէ մի կոմս կամ իշխան կին վերցնի նրան, քանի որ ճապոնացու համար նշանակութիւն չունի